

Աւթերորդ գլխուն վերնագիրն է Արիստոտէլ 'ի մանուսանն Աղեքսանդրի . յորում կը ցուցնէ թէ յառապելաց ոմանք զԱրիստոտէլ Աղեքսանդրի վերջին վայրկեաններուն ներկայ, իսկ այլք ալ բացակայ կը համարին . սակայն միշտ խորհուրդ կու տայ և կամ հողեվարքին յետին հրահանգներն և կամքը կ'ընդունի : Քիչերը կը պնդեն թէ նոյն իսկ Արիստոտէլ մասնակից եղած ըլլայ Աղեքսանդրի թունաւորման :

Իսկ իններորդ և վերջին գլուխը՝ կը 'երկայացնէ զԱրիստոտէլ իբր վրէժխնդիր Աղեքսանդրի, յենով կի տը Քամպրէի քերդուածին վրայ, Հուսկ ուրեմն Հէրց կը վերջացնէ իւր գրուածքը յետահայեաց ակնարկ մը տալով, և համառօտելով իւր քննադատութիւնքն՝ կը հաստատէ որ Արիստոտէլ ըստ ինքեան շատ տարբերութիւն չունի հասարակութեան իր վրայ ունեցած գաղափարէն, և թէ իր վրայ չինուած առասպելք՝ գրեթէ ամէնն ալ պատմական հիմմունքն : Թերեւ Արեւելք մասնաւոր կերպով իմաստասիրին գործերը և բնաւորութիւնը հոչակած է, բայց Արեւմուտք՝ սակաւ . յատկութիւններ, քանի մը գէպքեր և այլոց յատուկ եղած քանի մը արարք իրեն նուիրեր է :

Հէրցի գրուածքը շատ հմուտից է և միանգամայն յետին աստիճանի անաչառ քննադատութեամբ և մանրամասնօրէն գրուած :

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն




Քիչերուն ծանօթ է 'ի Ռէճճիո Էմիլիայէ փրօսփէրո Պէրդինի կուլուած անձի մը այն միջադէպը՝ զոր Յովսէփ վէրտի յակամայս բարձրացուց 'ի պատիւ նշանաւորութեան :

1872ին 'ի փարմա Մայիս ամսոյ մէջ վէրտիի Ախառ ողբերգութիւնը կը ձեացնէին, և Ռէճճիացի պարօնը՝ այս նոր գործոյն համբաւէն զրգուելով՝ մասնաւոր մեկնեցաւ իւր տունէն, 19 ֆռ. ծախք ընելով ընդ ամէնը, հաշուելով նաև կայարանին մէջ ըրած «անպիտան ճաշը» : Ողբերգութեան չհանեցաւ, բայց խղճմոսնքը հանդարտեցնելու համար, որովհետև ամէնը ինչ սքանչելի բան է կ'ըսէին, երկրորդ անգամ փարմա եկաւ,

երկրորդ ներկայացում՝ մը տեսաւ, անպիտան ճաշ մը գարձեալ ըրաւ՝ ի կայարանն, բայց գաղափարը բնաւ չի փոխեց . . . և նոյն տարւոյն հաշուետետրին մէջ անցուց 31 Փռ. ծախք վասն կրկին անյաջող ներկայութեան վէրտի ողբերգութեան :

Այն ատեն նստեցաւ նամակ մը գրեց առ վէրտի՝ խնդրելով որ հատուցանէ իրեն այս ծախքը, և աւելցուց թէ այսչափ հոշակեալ



Յովսէփ վէրտի.

լըն Ախտա՝ երկու կամ շատ շատ երեք թատրոններու շրջանը ընելէն վերջը՝ ապահովապէս տպագրողին դիւանատան փողինն, ըուն մէջ պիտի թաղուի : Վէրտի ոչ բարկացաւ, և ոչ ուսերը թոթվեց . այլ ընդհակառակն իւր տպագրողին Ռիքոուտիի նամակ մը գրեց գէպքը պատմելով՝ և հրաւիրելով որ Փրոսփէրո Պէր-գինիի վճարէ ոչ թէ 31 Փռանք, այլ 27 Փռ. և 80 հար. «Ինչ բանի համար ամբողջ ծախքը ինծմէ կ'ուզէ . . . (այսպէս կը գրէ վէրտի) . ճաշն ալ ես պիտի վճարեմ, թող նախ իր տունը ճաշէր» : Ամենայն ինչ կարգաւորեալ կերպով վերջացաւ . և ՚ի Մ'իլան Ռի-

քոռոտի տան դիւանաց մէջ պահուած է Պերդինի ընկալագիրը , որ 15 մայիս 1872 թուականը կը կրէ :

Այս միջադէպս կրնայ կարծիք տալ ընթերցողին՝ թէ վէրտի նուրբ սիրելութիւն մը և ուրախ զուարթ ժողովրդականութիւն մ'ունի՝ ինչպէս Ռոսսինի : Ընդհակառակն այս դարուս կէսէն վերջը երեցող յիւրաւի նշանաւոր անձանց մէջ՝ ոչ դը իրբն զվէրտի հեռի կացեր է ուրախ ցոյցերէ և ցնծալից ազադակներէ - այլ պարզ , անպաճոյճ և շատ բարի անձ մ'է : սաստիկ ատեցող ո'ւ է գովասանական յօդուածոց և հրատարակութեանց . այնպէս որ երբ առաջին անգամ իր Ախտան պիտի ներկայացուէր 'ի Գահիրէ , և նշանաւոր քննադատն Ֆիլիբբի ծանոյց իրեն երթն 'ի Գահիրէ զայն լսելու համար՝ սաստիկ նեղացաւ Յովսէփ վէրտի՝ իւր բովանդակ կենաց փառաւոր ընթացքին մէջ՝ պահած է միշտ արժանավայել և ծանր սիրելութիւն մը , որ զգարմացողն կը շարժէ 'ի յարգանս . և առաջին անգամ անպատրաստական և հետաքրքիր այցելու մը կը լքուցանէ : Բարեկամական զգացմունք խորարմատ են իւր սրտին մէջ . և մարդկային թշուառութեանց վրայ սաստիկ և ազդու ցաւ մը կը զգայ միշտ . բայց եթէ կայ բան մը որ զինքը զայրացնէ՝ և զրեթէ զղջալ տայ իւր առատաձեռնութեան վրայ՝ զոր ամէն օր կ'ընէ առ թշուառս , լրագրաց մէջ դրուած դրուատական յօդուածներն են . կը փափագի որ աշխարհ իւր վրայ զբաղի և խօսի այն չափով զոր ինքն աշխարհի կ'ընէ . այսինքն լուրս թեամբ , արուեստագիտի եզական և տարօրինակ բնաւորութիւն , որ ճանշնալով հանդերձ հասարակութեան առ ինքն ունենալիք երախտագիտութեան պարտքը՝ չուզեր բնաւ որ իր խաղաղութիւնը վրդովի . այլ կ'ուզէ ը'կզմիլ իւր մտածութեանց , գաղափարաց , ուսումնասիրութեանց և երեսկայութեանց մէջ :

* *

Կը պատմեն թէ երբ առաջին անգամ (1887 փետ.) 'ի Ս'իլան իւր Օթէլլոն ներկայացուցին՝ մինչդեռ կը հնչէին այս գեղարուեստական հրաշալի գործոյն արձագանքները , և լոմպարտեան մայրաքաղաքը կ'ընդունէր ամէն աշխարհէ եկած արուեստաւորներ , երաժշտական մեծահանճար քննադատներ՝ Արրիկո Պոլլո Ս'իլան պանդոկին սենեկաց մէջ մտնելով՝ ուր կը բնակէր վէրտի՝ զայն շատ տիուր և լուռ գտաւ . հարցընելով իւր այն մալձոտութեան պատճառը՝ որ յաղթականի մը անվայել բան էր , հետեւալ պատասխանն առաւ .

— Հիմա որ ինծմէ Օթէլլոն յափշտակեցիք և հասարակութեան մատնեցիք՝ ի՞նչ տուիք փոխարէն . ինծի համար ամենամեծ հա-

ճոյք էր առանձինն ապրիլ իմ աշխատութեանս այն արդեանց հետ, բայց արդ այն գործը այլ ևս իմն չէ . . . և ալ կարողութիւն չունիմ գարձեալ գլխէն սկսելու :

Նոյն բանը կը հանդիպի այժմ նաև Ֆալսթաֆի համար : Այս նոր գործը՝ որչափ առասպելաց և ցնորարանութեանց տոբիթ տուաւ, երբ իմացուեցաւ թէ վէրտի վրան կ'աշխատի Նշանաւոր իտալացի քննադատ մ'ալ որպէս զի այս զրուցաց վերջ տայ և իբր ալ բնական հետաքրքրութիւնը յագեցընէ՝ նոյն իսկ հեղինակէն ուղեց ճշմարիտ տեղեկութիւն առնուլ, և 'ի պատասխան իւր գրածին՝ հետեեալ նամակն ստացաւ.

Ճենովա 30 Դեկտ. 1890

« Չեմ գիտեր ի՞նչ կրնամ զուրցել ձեզի. Ֆալսթաֆի նկատմամբ արդէն ամէն տեսակ բան զուրցուեցաւ — և երբեմն իրականէն ալ աւելի — բայց ճիշդն այս է. — Պոլիդո ինծի համար կատակախօս և ծաղրածու գրեցի մը գրեց. շատ զուարճալի է. ես ալ կը զուարճանամ զայն նօգաներով չարչարելով : — Փիլի կամ գրեթէ դեռ ոչինչ մաս մը չարագրեր եմ : Ե՞րբ պիտի լինցնեմ արդեօք. ո՞վ գիտէ, պիտի լինցնեմ . . . Այս է պարզ և միակ ճշմարտութիւնը. ողջոյն շատ և մաղթանք » :

Թ. վերտի

Այն չարչարելով զուարճանալը, որոշեալ օր մը կարգելու անբաս տուգութիւնը, և վերջապէս իր առանձնական գործերն ուրիշի հաղորդելու խորշումը՝ յայտնի նշաններ են թէ կը զգուի հրապարակային ցոյցերէ և ազադականերէ :

Թովսէփ վէրտի միայնակեաց մ'է և մեծապէս խորհող անձնաւորութիւն մը. իբրև պարզ նիւթական թղթոյ վրայ գրելը՝ գրեթէ իր ամէն գործոց համար չորս ամէն աւելի չէ աշխատած. և սակայն դեռ Տոնիծէդգիի կայծակնանման և եզական աւրագութեան չի հաւասարիր, որ մէկ ամսուան մէջ՝ գրած է Լուկրեցիա Պորսիա, 15 օրուան մէջ Լուչիա տի Լամբրոնո և ինն օրուան մէջ՝ տոն ֆասգոնայէ : Թովսէփ վէրտի՝ աւելի խորհրդածող է, և այս բանն ամիտի բնաւորութեանց յատուկ է. կ'ուսումնասիրէ երկայն ատեն իր առարկայն, ներկայացընող անձանց այլ և այլ զգացմանց և կրից պատճառները կը գտտէ և կը կշռէ, և երբեմն այնքան զբաղած կ'ըլլայ իր ստեղծած անձնաւորութեանց գերին մէջ՝ որ ժամերով կարծես թէ յափշտակուեր է կամ թմբբալից ըմպելեաց ազդեցութեան տակ է. Նաքոչգողունուտրէնց (Սթէլլո) գրեթէ կէս դարու միջոցի մէջ՝ վէրտի մարդկային սրտին ամէն թելերը թրթռացուցեր է, պատմութիւնը բանաստեղ-

Ժական լուսով մը լուսաւորեր է, առապելները կենդանացուցեր է, մեծ մարդկանց հետ մրցեր հանճարով, միջակ հանճարներն ալ բարձրացուցեր է իր անդուլ ջանքը: Բայց այս հանճարը որ այսքան լուսաւոր, յանկարծակի, մշտամնաց, և ամենընտիր գեղգեղներով աղբիւրն եղած է՝ ոչ երբէք առաջին թափով յայտա նուեր է, այլ միշտ ջանասէր պատրաստութեանց պէտք ունեցեր է. օրինակի համար առնու՜ք Օթէլլոն իւր վերջին գործը. 1886ին լսուեցաւ՝ որ Պոլիդո յանձներ է իրեն գրքոյկը քանի մը տարի առաջ. բայց վէրտի փոխանակ զայն կերպարանափոխ ընող երաժշտութեան վրայ մտածելու՝ սկսաւ Շէքսպիրն ուսումնասիրել, թէ՛ արձակ և թէ՛ ոտանաւոր թարգմանութիւնները թղթատեց, կարգաց բոլոր անհամար ծանօթութիւններն և լուսաբանութիւնները, զանազան տարբերութիւնները նշանակեց ամենէն աւելի տարակուսական կտորներուն մէջ: Այս ոճով իւր միտքը նորանոր ծանօթութեամբ կը ճոխանար միշտ. յետոյ կամաց կամաց Օթէլլոյ, Տէլլոմոնա, Էսկո, և Կասսիո իւր երևակայութեան մէջ կերպարանեցան, աչաց առջև կը շրջէին, նախանձու և սիրով վառեալք մէկզմէկ կը նախատէին, կը բամբասէին և կը սպաննէին... և այն ատեն վարժապետը իւր հանճարոյն և մտաց ներքին և խորհրդաւոր հրաւիրանաց անսալով՝ ձեռքը կ'առնուր գրքոյկը, և քիչ ամիս վերջը կու տար ի լոյս իւր մտաց զարմանալի արգասաւորութեան այս նոր ցոյցը:

Էւ սակայն միշտ երբ նոր վերջացած գործ մը հրատարակութեան կու տար՝ ցաւօք սրտի կը կատարէր այս գործողութիւնը. վէրտի նիւթապէս երաժշտութիւնը գրել սկսելին առաջ՝ պէտք է, ինչպէս որ ըսինք՝ ամբողջ գործը իւր մտաց մէջ ամփոփ ունենայ. այնպէս որ գրած ժամանակ՝ գրեթէ անսխալ է. կարծես թէ ներշնչման մը կը հպատակի. Բայց նախ և առաջ պէտք է նիւթին և անձանց հաւնի. յետոյ տաքնալով՝ հլութեամբ կ'երթայ իւր հանճարոյն առաջնորդած պողոտայէն, իւր մտաց ամենայն թափով ուշի ուշով մտադիր կ'ըլլայ այն քաղցրերգութեանց որոնք իւր ականջին մէջ կը լսուին. կը գունաւորէ զայնս իւր հանճարոյն վրձինով՝ և հաճա գործը կը վերջանայ. ժողովուրդն ապշած՝ կը ծափահարէ բուռն կերպով:

Ահա այս է վարժապետն վէրտի. իտալական երաժշտութիւնը վերածնող իր նախնի երեք մեծամեծ վարժապետաց ամենեւին չի նմանիր. բայց ժամանակին պարագայք և պահանջմունք ալ տարբեր էին քան ինչ որ այժմ. երբ Ռոսսինի, Պելլինի, Տոնիժեդդի կը գրէին՝ թատրոնը համեմատութեամբ դեռ շատ խեղճ գիւրքի մէջ էր. և թատերական տեսչութիւնք՝ ըստ կամս կը փոփոխէին

ներկայացմունք , և միշտ նորանոր գործոց կը փափագէին . գլուխ գործոց հրաշակերտներ՝ մին զմիւր կը յաջորդէին , այն գարշաճային առատութեամբ՝ որ կատարեալ գաղափար մը կու տայ վերածնութեան ժամանակին . և անյագ ժողովուրդը միշտ նորաւոր բաներ կը պահանջէր . երբ մտածենք թե՛ զամ մը որ անմահ անունն Ռոսսինի՝ միայն տասուիրեք օրուան մէջ ստեղծեց իւր գեղեցկահիւս Սէվիյի վարսավիրայն և հուսկ վերջին ժամուն ձանձրացած՝ աղաչեց իւր մտերիմ բարեկամին Պետրոս Ռոմանիի՝ որ ինքը շարագրէ Տոն Պառզոլոյի այն մասը « թերթ մը կը պակտի » . պէտք է յիշել դարձեալ որ Տոնիծեղդի՝ առաւօտ մը՝ ի խնդրոյ Մէրքտտանդէի , որ այն ատեն աշացաւով կը նեղուէր , քսանուհինգ օրուան մէջ գրեց Միլանու Սկալա թատրոնին համար խոստացուած գործը :

Վէրտի չունի այս պատրաստականութիւնը կամ արագութիւնը . չէ փնտռած և չի փափագիր ալ ունենալ . սաստիկ սիրահար իւր արուեստին՝ եթէ երիտասարդութեան առաջին տարիներուն փոքր ողբերգութիւններն դարձեալ համեմատութեամբ արագ գրեց , այժմ ամփոփեցաւ և դանդաղեցաւ :

1849 էն վերջը կըսկսի Վէրտի արուեստական ճշմարիտ յաղթանակը . նախ յիշենք զԼուիզա Միլլէի . յետոյ գրեց Ռիկլէզգոն . այս գործէն վերջը՝ հեղինակն աւելի ընդարձակ և խորին զգացմամբ կը ներկայանայ հասարակութեան Տոն Գարլոսի մէջ . այս գործով համբաւոյն գաւառներէն՝ փառաց տաճարին մէջ դասուեցաւ Վէրտի անունը , ուր կը հրամայէ ցայսօր գրեթէ մինակ յետ քառասուն ամաց անընդհատ ջանից :

Այս փառաց ժամանակի ծնունդ են հետեւեալ գործերը . Թրուվաթոր , Թրավիաթա , Սիկիլեան երեկոյք , Դիմակաւոր Պարը , Զակատագրին ուժը , Ախտա և Օթէլլո . ամբողջ դպրոց մը , արուեստին բովանդակ ճարտարութիւնը , աշխարհ մը՝ որուն մէջ մարդ կը կորուսի . և ցարդ իսկ իր 78 տարուան հասակին մէջ . այնպիսի գործոյ մը վրայ կ'աշխատի՝ որուն բոլոր արուեստագէտ աշխարհն՝ անհամբերութեամբ կը սպասէ :